

Ուրբաթ, 13 Յունուարի միջօրէի մօտ, խմբագրատուն այցելեց Տոքթ. Վահագն Աղամեան, որ ներքին եւ սրտի հիւանդութեանց մասնագետ է, նաեւ մասնագիտացած է ընտանեկան միջերկրականեան տախտիկան հարցերու մէջ, որուն մէկ ճիւղն է հայկական հիւանդութիւնը:

Յարգարժան հիւրին կ'ընկերանային Մելգոնեան կրթարանի նախկին շրջանաւարտներ Զօհրապ Շամմասեան եւ Կարէն Աւետիբեան:

Նկատի առնելով որ Տոքթ. Աղամեան այլ ժամադրութիւններ ուներ, անմիջապէս անցանք մեր հարցումներուն:

Հ.- Կիպրոս որ ըսնք - մանուաճոյ այս օրերուն - Մելգոնեանի կնճոտոս հարցը կը կլանէ մեզ, եւ դո՛ւք յարմարագոյն անձն էք, բանի որ տասնեակ տարիներ այդ անուանի կրթական հաստատութեան հոգաբարձութեան անդամ եղած էք, նաեւ հոգաբարձութիւն ըսելով ի՞նչ պէտք է հասկնալ:

Պ.- Իմ պատասխանս ընդհանրապէս բոլոր ազգիներն է, ի մասնաւորի Ափիւզքահայութեան: 21-րդ դարուն, դպրոցներ՝ մասնաւոր Մելգոնեանի գալիպրով - պէտք է փակուին, աւելին, նոր դպրոցներ բացուելու են, մեր ապագայ սերունդը փրկելու համար:

Մելգոնեան Կրթական Հաստատութեան Հոգաբարձութեան պաշտօնն էր օրը օրին դպրոցին առտներն հարցերը լուծել, այլ խօսքով՝ մենք ծրագիր մշակող եւ գործադրողներ չենք, այդ կարեւոր հարցերը Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական Վարչութիւնը յանձն առած էր:

Հ.- Ո՞վ կամ որոնք բացած են Կիպրոսի դատարանին մէջ բացուած դատը:

Պ.- Պոլսոյ Պատրիարքը բացած է դատը, որպէսզի Մելգոնեանը չփակուի: Պատրիարքը միակ իրաւասուն էր դատը բանալու:

Հ.- Դո՛ւք ի՞նչ դեր ունիք, միջին համբոս որոնման հասար:

Պ.- Ես ծնունդով եւ արմատներով Մելգոնեանցի եմ, ուսանող եւ Հոգաբարձու, ամբողջ ընտանիքով եւ գերդաստանով Մելգոնեանցի ենք, 4 սերունդ: Աւելին՝ նաեւ Հ.Բ.Ը. Միութեան անդամ եղած ենք, ես անձնապէս Կիպրոսի Բարեգործականի ատենապետ եղած եմ եւ Փութպոլի խումբի (indoor) Հիմնադիր եղած եմ, այդ խումբը 5 տարի ախոյեան եղած է եւ Կիպրոսը ներկայացուցած եւրոպայի մրցումներուն:

Իմ նպատակս է միջին եզր գտնել եւ քաղաքական լուծում տալ, դպրոցը բաց մնայ եւ գիշերօթիկ ունենայ: Կիպրոսի Հայ Համայնքը ի վիճակի չէ ցերեկեայ երկրորդական դպրոցի մը աշակերտութիւն հասցնել, քանի որ «Նարեկ» նախադրժական վարժարաններ կան (Նիկոսիա, Լիմասոլ եւ Լաոնաքա), տարեկան շուրջ 15 շրջանաւարտներ կու տան, որոնց կէսը Մելգոնեան կը յաճախէին եւ անոնց ծախսը կը Հոգար կիպրական պետութիւնը:

Նարեկ վարժարաններու Հոգաբարձութեան անդամ եղած եմ 17 տարի, վերջին վեց տարիներուն՝ ատենապետ: Անցեալ շոկտեմբեր 9-ին երբ Հայ Համայնքի ներկայացուցիչ ընտրուեցայ, պէտք էր հրաժարէի ե՛ւ ատենապետութենէն ե՛ւ կազմէն, ըստ երկրին Սահմանադրութեան:

Հ.- Ի՞նչ մտադրութեամբ Ամերիկա եկած էք:  
Պ.- Ամերիկա գտնուելուս միակ շարժառիթը Մելգոնեանի հարցն է: Հանդիպումներ ունենալ Սանուցի վարչութեան հետ, ինչպէս նաեւ Նիւ Եորք պիտի երթամ Հ.Բ.Ը.Մ.-ի նախագահ Պերճ Սեդրակեանի հետ մասնաւոր տեսակցութիւն ունենալու (Հինգշաբթի, 19 Յունուարին):

Հ.- Ի՞նչ պաշտօն ունիք Խորհրդարանին մէջ:  
Պ.- Անդամ եմ Կրթական Յանձնախումբին, որ կը բաղկանայ 12 անդամներէ:

Մեր կողմէ աւելցնենք, որ Խորհրդարանը նկատի առած է Տոքթ. Վահագն Աղամեանի Մելգոնեանի հոգաբարձու ըլլալը՝ 14 տարի, իսկ «Նարեկ» վարժարաններու՝ 17 տարի:

Տոքթ. Աղամեան իբրեւ գործօն անդամ Խորհրդարանի, հիմնած է հայերէ բաղկացեալ 5 յանձնախումբեր.

1. Կրթական Յանձնախումբ,
2. Մելգոնեանի Փրկութեան Յանձնախումբ,
3. Քաղաքական Յանձնախումբ
4. Կիպրոսի Հայկական Բոնագրաւեալ Վանքերու եւ Յուշարձաններու Յանձնախումբ
5. Ընկերային Յանձնախումբ

Համակրելի եւ լայնախոս ներկայացուցիչը հրաւեր ուղղած է իրեն զօրալիք եղողներու թէ չեղողներու, որ մասնակցին վերոյիշեալ յանձնախումբերուն, գրեթէ բոլորը դրական պատասխան տուած են:

Ժամանակը արագ սահած էր, ակամայ բաժնուեցանք համակրելի եւ կամակ ժայտ մեր ուժական հիւրէն: